ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N2977 - Ա **20 ապրիլի 2009թ.**

ՔԱՆԱՔԵՌԻ 5-ՐԴ ՓՈՂՈՑԻ Հ. 20 ՀԱՍՑԵԻ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆԸ ԿԻՑ ՀՈՂԱՄԱՍԻ ԵՎ ՇԵՆՔ-ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԼԱՈՒՐԱ ՔՅԱՐԱՄԻ ՀԱԿՈԲՅԱՆԻ, ՎԵՆԵՐԱ ԼԵՆԴՐՈՒՇԻ ԲԱԴԻԿՅԱՆԻ, ԷԼՄԻՐԱ ԼԵՆԴՐՈՒՇԻ ԲԱԴԻԿՅԱՆԻ, ՀՈՒՓՍԻՄԵ ԼԵՆԴՐՈՒՇԻ ԲԱԴԻԿՅԱՆԻ, ՆՈՅԵՄԶԱՐ ԼԵՆԴՐՈՒՇԻ ԲԱԴԻԿՅԱՆԻ ԳՈՒՅՔԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարցի քննարկման համար հիմք է հանդիսացել Լաուրա Քյարամի Հակոբյանի (ծնված 25.10.1939թ.), Վեներա Լենդրուշի Բադիկյանի (ծնված 25.07.1959թ.), Էլմիրա Լենդրուշի Բադիկյանի (ծնված 10.01.1962թ.), Հռիփսիմե Լենդրուշի Բադիկյանի (ծնված 14.10.1973թ.), Նոյեմզար Լենդրուշի Բադիկյանի (ծնված 19.04.1967թ.) դիմումը: Տեղազրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Քանաքեռի 5-րդ փողոցի հ.20 հասցեում ընդհանուր հողամասի մակերեսը փաստացի կազմում է 435.12քմ, որից 242քմ մակերեսով հողամասը Լաուրա Քյարամի Հակոբյանին, Վեներա Լենդրուշի Բադիկյանին, Էլմիրա Լենդրուշի Բադիկյանին, Հռիփսիմե Լենդրուշի Բադիկյանին, Նոյեմզար Լենդրուշի Բադիկյանին սեփականության իրավունքով պատկանող հողամասն է: Օրինական հողամասին կից օգտագործվող 193.12քմ մակերեսով հողամասը օրենքի ուժով կարող է փոխանցվել անհատույց սեփականության իրավունքով:

Հաշվի առնելով, որ բնակելի տունը կառուցվել է մինչև 1946 թվականը, 15.04.2008թ. ժառանգության իրավունքի վկայագիրը, Երևանի քաղաքապետարանի <<Հողի և ունեցվածքի գործառնություններ>> ՊՓԲԸ-ի 15.04.2009թ. հ.20/2-Ե/232 գրությունը, Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության 08.04.2009թ. հ.20ել-2998 եզրակացությունը, համաձայն որի Շրջանայինի փողոցի հ.30 բնակելի տան զբաղեցրած և դրա սպասարկման համար անհրաժեշտ հողամասը համապատասխանում է ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետի 1, 2, 3 ենթակետերով սահմանված պահանջներին և ընդգրկված չէ նույն օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված սահմանափակումների ցանկում, ղեկավարվելով <<Երևան քաղաքում իրավունքը հաստատող փաստաթղթերը չպահպանված անհատական բնակելի տների կարգավիճակի մասին>> ՀՀ օրենքով, ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի <<Հայաստանի Հանրապետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանակոչման, անվանափոխության, անշարժ գույքի՝ ըստ դրա գտնվելու և /կամ/ տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին>> հ.2387-Ն որոշմամբ.

1. Վերականգնել Քանաքեռի 5-րդ փողոցի հ.20 հասցեում գտնվող գույքային միավորների նկատմամբ Լաուրա Քյարամի Հակոբյանի, Վեներա Լենդրուշի Բադիկյանի, Էլմիրա Լենդրուշի Բադիկյանի, Հռիփսիմե Լենդրուշի Բադիկյանի, Նոյեմզար Լենդրուշի Բադիկյանի

հողօգտագործման իրավունքը բնակելի տան զբաղեցրած և սպասարկման համար անհրաժեշտ օրինական 242քմ մակերեսով հողամասին կից 193.12քմ մակերեսով հողամասի չափով՝ ճանաչելով նրանց սեփականության իրավունքը 193.12քմ մակերեսով հողամասի և դրա վրա գտնվող շենք-շինությունների նկատմամբ։

2. Շենք-շինությունների մակերեսները ենթակա են ճշտման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանման կողմից։

3. Հողամասի սահմանները որոշվում են Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության կողմից տրված միասնական գլխավոր հատակագծով։

4. Քանաքեռի 5-րդ փողոցի հ.20 հասցեի բնակելի տանը տրամադրել հասցե՝ <<Քանաքեռի 5-րդ փողոցի հ.20 տուն>>։

5.Առաջարկել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Զեյթուն տարածքային ստորաբաժանմանը գրանցել քաղաքացիներ Լաուրա Քյարամի Հակոբյանի, Վեներա Լենդրուշի Բադիկյանի, Էլմիրա Լենդրուշի Բադիկյանի, Հռիփսիմե Լենդրուշի Բադիկյանի, Նոյեմզար Լենդրուշի Բադիկյանի սեփականության իրավունքը սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի նկատմամբ, տրամադրել անշարժ գույքի սեփականության իրավունքի գրանցման վկայական՝ լուծելով գույքագրման արդյունքում հաշվառված անշարժ գույքի խնդիրները։

6. Հանձնարարել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարության պետին՝ սույն որոշման օրինակները 5-օրյա ժամկետում առաքել Քանաքեռ-Զեյթուն թաղապետարան։

7. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա։

8. Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի իրավաբանական վարչության պետ Ա. Սարգսյանի վրա։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Գ. ԲԵԳԼԱՐՅԱՆ